

**ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՉԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՋԱՐԳԱՅՈՒՄԸ**

Դպրոց ընդունվելով՝ երեխայի համար առաջատար գործունեություն է դառնում ուսումնական գործունեությունը: Ըստ ակադ. Ա. Լեոնտևի, առաջատար է այնպիսի գործունեությունը, որի ընթացքում տեղի է ունենում հոգեկան հիմնական գործընթացների և անձնավորության էական հատկությունների ձևավորումը, որոնք և բնորոշում են տարիքային զարգացման տվյալ փուլի գլխավոր նվաճումը: Ըստ այդմ էլ՝ կրտսեր դպրոցականի «Ուսումնական գործունեությունը հասարակայնորեն նշանակալի, պարտադիր, գնահատելի գործունեություն է, և դրանով այն սկզբունքորեն տարբերվում է գործունեության բոլոր այլ տեսակներից, որոնցով առաջ երեխան զբաղվում էր նախադպրոցական հիմնարկներում կամ տանը»:¹

Կրտսեր դպրոցականի ուսումնական գործունեությունը ձևավորելիս պիտի նկատի ունենալ դպրոցական համակարգված ուսուցման հոգեբանամանկավարժական հիմնական առանձնահատկությունները: Նշանավոր հոգեբան Դ. Էլկոնինը տարբերակել ու բնութագրել է դպրոցական համակարգված ուսուցման հիմնական առանձնահատկությունները.

Դպրոցական ուսուցման առաջին հիմնական առանձնահատկությունն այն է, որ դպրոց ընդունվելով՝ երեխան սկսում է իրականացնել, թերևս առաջին անգամ իր կյանքում, հասարակականորեն նշանակալի և հասարակականորեն գնահատելի գործունեություն՝ ուսումնական գործունեություն, որը նրան դնում է բոլորովին նոր դիրքում, որով էլ որոշվում են նրա մնացած բոլոր հարաբերությունները մեծահասակների և հասակակիցների հետ ընտանիքում, դպրոցում, դպրոցից դուրս, վերաբերմունքը իր նկատմամբ և ինքնագնահատումը: Եվ միանգամայն իրավացի է Լ. Բոժովիչը, երբ իր հետազոտությունների հիման վրա եզրակացնում է, թե «դպրոցական համակարգված ուսուցման համար պատրաստվածությունը որոշվում է ամենից առաջ երեխայի մեջ հասարակականորեն նշանակալի և հասարակականորեն գնահատելի գործունեության միտումի ձևավորմամբ»:²

Համակարգված դպրոցական ուսուցման երկրորդ էական առանձնահատկությունն այն է, որ այն պահանջում է պարտադիր կարգով կատարել բոլորի համար միատեսակ կանոնների մի ամբողջ շարք, որոնց ենթակա է նաև աշակերտի վարքը դպրոցում գտնվելու ամբողջ ժամանակամիջոցում:

Դպրոցական համակարգված ուսուցման երրորդ էական առանձնահատկությունն այն է, որ դպրոց ընդունվելուց սկսվում է գիտության համակարգված կամ տվյալ գիտության բնագավառի, տվյալ ուսումնական առարկայի ուսումնասիրությունը տրամաբանությամբ: Պիտի նկատի ունենալ այն, որ տվյալ գիտության յուրացման էապես կարևոր հատկանիշն այն է, որ գիտական հասկացություններն իրենցից ներկայացնում են որոշակի համակարգ, և դրանք չի կարելի ուսումնասիրել պատահական հաջորդականությամբ:

Դպրոցական համակարգված ուսուցման չորրորդ էական առանձնահատկությունն այն է, որ դպրոցական ուսուցման անցնելիս երեխան պետք է արմատականորեն փոխի իրեն դաստիարակող չափահասների հետ ունեցած հարաբերությունների ամբողջ համակարգը: Ասել է թե՛ հարաբերությունների համակարգն անմիջականից դառնում է միջնորդավորված, այսինքն՝ ուսուցիչը աշակերտների հետ և աշակերտներն ուսուցչի հետ հաղորդակցվելու համար անհրաժեշտորեն պետք է տիրապետեն միջոցների հատուկ համակարգի:

Այդ առանձնահատկությունները բնութագրելուց հետո հոգեբան Դ. Էլկոնինը տալիս է ուսումնական գործունեության հետևյալ սահմանումը. «Ուսումնական գործու-

¹ Դ. Էլկոնին, *Կրտսեր դպրոցականի ուսուցման հոգեբանություն*, Եր., 1975, էջ 19:

² Ավելի մանրամասն տե՛ս Լ. Բոջովիչ, *Личность и его формирование в школьном возрасте*, М., 1968.

նեությունը նպատակաուղղված գործունեություն է, որի բովանդակությունը կազմում է գիտական հասկացությունների ոլորտում եղած գործողությունների ընդհանրացված եղանակների յուրացումը:³ Իսկ նման գործունեության ձևավորումը կրտսեր դպրոցական տարիքի սկզբում՝ առաջին դասարանցիների մեջ ընթանում է մի շարք դժվարություններ հաղթահարելով:

Ուսումնասիրելով առաջին դասարանցու հոգեբանությունը՝ Մ. Վոլոկիտինը բացահայտել է մի շարք դժվարություններ.

- ռեժիմի հետ կապված դժվարություն. մանկապարտեզում դաստիարակները վերահսկում են երեխայի գործողությունները մինչև կեսօր, իսկ հետո՝ տանը թուլանում է այդ վերահսկողությունը.
- փոխվում է երեխայի առաջատար գործունեությունը. խաղին փոխարինում է ուսումնական գործունեությունը.
- փոխվում է վերաբերմունքը ընկերների նկատմամբ, դեռևս չի ձևավորված փոխօգնության զգացումը.
- փոխվում է վերաբերմունքը մանկավարժների նկատմամբ. ժամանակ է պետք, որպեսզի 1-ին դասարանցիները պատշաճ հարաբերություններ ստեղծեն ուսուցիչների հետ.
- արմատապես փոխվում է 1-ին դասարանցիների հոգեվիճակը. 6 տարեկանները մանկապարտեզում համարվել են «ավագ», իսկ հիմա դպրոցում իրենք ամենափոքրերն են և այլն: Նկատի ունենալով ուսումնական գործունեությունը, հոգեբան Գ. Էլկոնինը վկայակոչում է նաև մի այլ դժվարություն. ուսումնական գործունեության մեջ առկա այն *հակասությունը*, որ լինելով հասարակական իր իմաստով, իր բովանդակությամբ, իրականացման իր ձևով, այն միաժամանակ անհատական է ըստ արդյունքի (խաղի ժամանակ միշտ չէ, որ առկա է արդյունքը), այսինքն՝ ուսումնական գործունեության ընթացքում յուրացված գիտելիքները, հմտությունները, գործողության եղանակները առանձին աշակերտի վաստակն է. «Դրա համար էլ միշտ ուսումնական գործունեությունը անհատապաշտական ուղղվածություն ունեցող գործողության վերածվելու վտանգ կա: Նման անհատապաշտական ուղղվածության դեպքում կորչում է գործունեության հասարակական իմաստը: Որպեսզի դա տեղի չունենա, անհրաժեշտ է, որ ուսումնական աշխատանքի ընթացքում ստացված գիտելիքները, կարողությունները և հմտությունները իրենց կիրառումը ստանան հանրօգուտ աշխատանքում, կապվեն դասարանական կոլեկտիվի կենսագործունեության հետ»:⁴

Ակադ. Վ. Դավիդովը, անդրադառնալով կրտսեր դպրոցականի հոգեկան զարգացման հիմնահարցին, նկատում է, որ առաջին դասարանցիները դժվարություններ են կրում ուսումնական տարվա վերջին շրջանում: Ուսումնական տարվա սկզբներին «նրանք հաճույքով դպրոց էին շտապում դասերից բավականին շուտ, պատրաստակամությամբ էին ցանկացած վարժություններ կատարում, հպարտանում էին ուսուցչի տված գնահատականներով: Այս ամենի մեջ իր արտահայտությունն էր գտնում գիտելիք ձեռք բերելու նրանց ընդհանուր պատրաստակամությունը»:⁵ Մակայն ուսումնական տարվա վերջերին այդ ամենը դառնում է սովորական բան, երեխաները կարծես «հագեցնում» են, դպրոցի կյանքի արտաքին կողմերը երեխայի համար սովորական են դառնում, ուստի նրա մեջ մարում է ուսման նկատմամբ սկզբնական ձգտումը, և վրա է հասնում անտարբերությունը»:⁶ Իհարկե, առաջին դասարանում դասավանդող ուսուցիչները երբեմն փորձում են հաղթահարել այդ դժվարությունը՝ ուսումնական նյութի մեջ հետաքրքրաշարժ տարրեր ներմուծելով: Մակայն այդ հնարը արդյունավետ է լինում միայն կարճ ժամանակի ընթացքում: Ըստ ակադ. Վ. Դավիդովի՝ «Ուսուցման գործընթացում «հագեցման» այդպիսի վիճակը կանխելու ամենաառաջին եղանակը աշակերտներին բավականաչափ բարդ ուսումնախմբական խնդիրներ առաջադրելը,

³ Գ. Էլկոնին, *նշվ. աշխ.*, էջ 72:

⁴ Նույն տեղում, էջ 28–29:

⁵ *Տարիքային և մանկավարժական հոգեբանություն*, Եր., 1977, էջ 91:

⁶ Նույնը:

նրանց պրոբլեմային իրավիճակների առջև կանգնեցնելն է: Դրանց հաղթահարման համար աշակերտները պետք է տիրապետեն անհրաժեշտ հասկացությունների»:⁷

Կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության ձևավորման գործընթացում առաջնակարգ դեր են կատարում ուսումնաճանաչողական մոտիվները (դրդապատճառները), որոնք տարբերվում են սովորական ճանաչողական հետաքրքրություններից: Եթե սովորական հետաքրքրությունը պարզապես շրջապատող իրականության երևույթների լայն շրջանների մասին տեղեկատվության ձեռքբերմանն են ուղղված, ապա ուսումնաճանաչողական դրդապատճառները ուղղված են ուսումնասիրվող առարկայի կոնկրետ բնագավառում գործողության եղանակների յուրացմանը: Հոգեբան Գ. Էլկոնինը մատնանշում է, որ «ուսումնական գործունեության կառուցվածքի կարևորագույն բաղադրամասն են ուսումնաճանաչողական մոտիվները: Դրանց ձևավորումը ուսուցման կարևորագույն խնդիրն է, և նրանից, թե որքանով են արդեն տարրական դասարաններում ձևավորվել այդպիսի մոտիվներ, շատ բանով է կախված հետագա ուսուցման հաջողությունը»:⁸

Ուսումնական գործունեության ընթացքում պետք է ձևավորել ու զարգացնել նաև դպրոցականների ճանաչողական պահանջումները: Դրանք ձևավորվում են իրար հետ փոխկապակցված որոշակի փուլերով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները: Պրոֆ. Ա.Բայանը տարբերում ու բնութագրում է մեծ 4 փուլեր.

Առաջին փուլում աշակերտին հետաքրքրում, գրավում է գիտական գիտելիքների էմպիրիկ հիմքը՝ վառ իլյուստրացիան, հետաքրքրական փորձը, ուշագրավ փաստերն ու օբյեկտները: *Երկրորդ փուլում* աշակերտի մեջ ձևավորվում է ուսումնասիրվող առարկայի գլխավոր, էական կողմերը ճանաչելու պահանջումը, առաջանում է բարձր հետաքրքրասիրություն: *Երրորդ փուլում* առարկան կամ երևույթը ճանաչելու պահանջմունքը դառնում է առավել նպատակամետ, երբեմն կապված կենսական պլանների, անձնական հակումների և ընդունակությունների հետ. «Այստեղ դրսևորվում է ճանաչողական պահանջումների ընտրողական բնույթը, նպատակաուղղվածությունը, նրանց զերանելը ճանաչողական հետաքրքրությունների»:⁹ Գնաչողական պահանջումներն ձևավորման *չորրորդ փուլում* ուսումնասիրվող առարկայով, երևույթով հրապուրվելու, կրթոտությամբ տարվելու փուլն է, որը կապված է աշակերտի մտավոր ընդունակությունների, ցայտունորեն արտահայտված հակումների հետ. «Այս փուլում սովորողների մեջ առաջանում է դպրոցում իր ստացած ծրագրային, դասագրքային գիտելիքները լրացնելու, ինքնուրույնության պահանջումները»:¹⁰ Ա. Բայանն իրավացիորեն գտնում է, որ բոլոր փուլերում էլ դրսևորվում է ճանաչողական պահանջումների ինտելեկտուալ գործառնությունը. «Ճանաչել ուսումնասիրվող առարկայի, երևույթի էությունը, նրա էական, գլխավոր հատկանիշը տարբերել ոչ էական, երկրորդական հատկանիշից, ճանաչել տվյալ երևույթի պատճառը, այն տարբերել առիթից, տեսնել երևույթների ներքին փոխկապակցվածությունը, այն օրենքները, որոնք ընկած են ուսումնասիրվող երևույթների հիմքում, գաղափարները, որոնց ենթակա են ուսումնասիրվող փաստերը»:¹¹

Գնաչողական պահանջումները անխզելիորեն կապված են իմացական հետաքրքրությունների հետ: Ուսումնական գործունեության ձևավորման գործընթացում դրանք կարևոր դեր են կատարում: Ըստ Գ. Շչուկինայի՝ «իմացական հետաքրքրությունն իր ընդհանուր ձևով կարելի է սահմանել որպես իմացական գործընթացի (իսկ ուսուցումն էլ իմացական գործընթաց է-Ն.Ա.) նկատմամբ անձնավորության ընտրական նպատակայնության դրսևորում: Չգտում դեպի իմացությունը, տվյալ գիտական բնագավառը (կամ ուսումնական առարկան), այն հնարավորին չափ ավելի լիակատար իմացությամբ ընդգրկելու, խորությամբ, հիմնավոր ուսումնասիրելու ցանկությունը, իմացական գործունեությամբ զբաղվելու, նրա նպատակահարմար, արագ և հաջող ընթացքի համար անհրաժեշտ հմտություններ և ունակություններ ձեռք բերելու

⁷ Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Եր., 1977, էջ 91:

⁸ Գ. Էլկոնին, *նշվ. աշխ.*, էջ 74-75:

⁹ Ա. Բայան, *Աշակերտների ճանաչողական պահանջումները և դրանց ձևավորման ուղիները*, Եր., 1982, էջ 11:

¹⁰ Նույնը:

¹¹ Նույն տեղում, էջ 8:

ձգտումը»:¹² Նա կոչ է անում ուսուցիչներին ամեն կերպ զարգացնել ուսման նկատմամբ դպրոցականների հետաքրքրությունները, այդ նպատակով գործադրելով արգասավոր մեթոդներ:¹³

Կրտսեր դպրոցականի ուսումնական գործունեության ընթացքում տեղի է ունենում նաև նրա մտավոր զարգացումն ու դաստիարակությունը: Տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչները առանձնահատուկ ուշադրություն պիտի դարձնեն կրտսեր դպրոցականների մտավոր դաստիարակությանը, որի առաջնահերթ խնդիրներն Ի. Պոդլասնին սահմանել է իր «Տարրական դպրոցի մանկավարժություն» բուհական ձեռնարկում. որոշակի ծավալի գիտական գիտելիքների յուրացում, աշխարհայացքի ձևավորում, մտավոր զգացմունքների, ընդունակությունների և հակումների, ճանաչողական հետաքրքրությունների, անձի մտավոր կարողությունների ու հնարավորությունների զարգացում, ճանաչողական ակտիվության ձևավորում, իր գիտելիքները մշտապես լրացնելու պահանջմունքի ձևավորում, հանրակրթական պատրաստվածության մակարդակի բարձրացում, աշակերտներին ճանաչողական գործունեության մեթոդներով զինում, մտածողության եղանակների, ստեղծագործական գործունեության փորձի ձևավորում և այլն:¹⁴

Նա իրավացիորեն գտնում է, որ տարրական դասարաններում դասավանդողի առաջնահերթ խնդիրը պիտի լինի երեխաներին սովորել սովորեցնելը, որի մասին մատնանշել է դեռևս դասական մանկավարժ Կ. Ուշինսկին, գրելով. «Տարրական ուսուցման ժամանակ երեխաները պետք է իրենց բոլոր դասերը սովորեն դասարանում ուսուցիչների հսկողության ու ղեկավարության տակ, որոնք նախ երեխաներին պետք է սովորել սովորեցնեն, իսկ հետո միայն այդ գործը հանձնարարեն նրանց»:¹⁵

Իհարկե, վերոհիշյալով չեն սպառվում ուսումնական գործունեության ձևավորման խնդիրները և միջոցները: Այնուհանդերձ քննության առնված հարցերը կարծում ենք՝ կօգնեն տարրական դասարաններում դասավանդող ուսուցիչներին՝ մանկավարժորեն ճիշտ ուղղորդելու կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության ձևավորման ու զարգացման գործընթացը:

ФОРМИРОВАНИЕ И РАЗВИТИЕ УЧЕБНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ

___ Резюме ___

___ Н. Адамян ___

В статье показано, что после поступления в школу, главным для ребенка становится учебная деятельность, которая формируется преодолением ряда трудностей. Включенные в статью материалы несомненно помогут учителям начальных классов плодотворными формами и методами сформировать учебную деятельность младших школьников, вооружить их научными знаниями, навыками и умениями.

¹² Գ. Շ չ ու կ ի ն ա, Իմացական հետաքրքրությունը դպրոցականի ուսումնական գործունեության մեջ, Եր., 1975, էջ 6:

¹³ Կ. Մ շ ի ն ս կ ի ն յ, Սոբր. соч., Т. 6, стр. 272.

¹⁴ Ավելի մանրամասն տե՛ս Ի. Սոդասնյի, Педагогика начальной школы, М., 2000, стр. 91 - 92.

¹⁵ Կ. Ու շ ի ն ս կ ի ն, Մանկավարժական ընտիր երկեր, հ. 2, Եր., 1959, էջ 709: